**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ---------- 2026թ.** **N ----Ն**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ, ՆՐԲԱՆՑՔՆԵՐ ԵՎ ՓԱԿՈՒՂԻՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

**1. Աջափնյակ վարչական շրջանի.**

1) Ավետ Տերտերյան փողոցից սկսվող, դրան զուգահեռ ձգվելով և վերջնամասում թեքվելով, հ.01-001-0403-0006 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ավետ Տերտերյան փողոց, 1-ին նրբանցք,**

2) Ավետ Տերտերյան փողոցից սկսվող և դրան զուգահեռ ձգվելով դեպի հյուսիս, նախատեսվող Ավետ Տերտերյան փողոցի 1-ին նրբանցքը հատելով և ձախ ուղղությամբ թեքվելով, հ.01-001-0403-0034 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ավետ Տերտերյան փողոց, 2-րդ նրբանցք,**

3) Անանիա Շիրակացու փողոցից սկսվող, նախատեսվող Անանիա Շիրակացու փողոցի 2-րդ նրբանցքին զուգահեռ ձգվելով և Էդուարդ Բաղդասարյան փողոցը հատելով, հ.01-001-0423-0003 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Անանիա Շիրակացու փողոց, 1-ին նրբանցք,**

4) Անանիա Շիրակացու փողոցից սկսվող, նախատեսվող Անանիա Շիրակացու փողոցի 1-ին նրբանցքին զուգահեռ ձգվելով, նախատեսվող Ավետ Տերտերյան փողոցի 1-ին նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Անանիա Շիրակացու փողոց, 2-րդ նրբանցք:**

**2.Ավան վարչական շրջանի.**

1) Մարշալ Բաբաջանյան փողոցից սկսվող և հ.01-002-0108-0304 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Մարշալ Բաբաջանյան փողոց, 1-ին փակուղի,**

2) Մարշալ Բաբաջանյան փողոցից սկսվող և Ա. Շահինյան փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Մարշալ Բաբաջանյան փողոց, 2-րդ նրբանցք:**

**3.Արաբկիր վարչական շրջանի.**

1) Հովսեփ Արղության փողոցից սկսվող, կիսաշրջան կազմելով Ս. Մալխասյանց փողոցի նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հովսեփ Արղության փողոց, 3-րդ նրբանցք,**

2) Գ. Ղափանցյան փողոցի 01-003-0311-0146 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և Քանաքեռ ՀԷԿ հասնող ճանապարհահատվածն անվանակոչել պրոֆեսոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի անվամբ՝ **«Սերգեյ Համբարձումյան փողոց»,**

3) Գ. Ղափանցյան փողոցի հ.01-003-0303-0016 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0326-0001 ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել պետական և դիվանագիտական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր Կամո Ուդումյանի անվամբ՝ **«Կամո Ուդումյան փողոց»,**

4) Հ.01-003-0303-0112 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0303-0005 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 1-ին նրբանցք,**

5) Հ.01-003-0321-0005 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0325-0006 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 2-րդ նրբանցք,**

6) Հ.01-003-0323-0011 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0323-0027 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց**, **3-րդ նրբանցք,**

7) Հ.01-003-0304-0001 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0326-0006 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց**, **4-րդ նրբանցք,**

8) Հ.01-003-0322-0001 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0501-0192 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 5-րդ նրբանցք,**

9) Հ.01-003-0501-0190 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0501-0037 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 1-ին փակուղի,**

10) Հ.01-003-0501-0192 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0333-0025 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 2-րդ փակուղի,**

11) Գ. Ղափանցյան փողոցի հ.01-003-0301-0017 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և Քանաքեռ ՀԷԿ (հ.01-003-0501-0134 կադաստրային ծածկագրով հողամաս) հասնող ճանապարհահատվածն անվանակոչել ֆուտբոլիստ, միջազգային

կարգի սպորտի վարպետ Հովհաննես Զանազանյանի անվամբ՝ **«Հովհաննես Զանազանյան փողոց»,**

12) Հ.01-003-0303-0001 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0331-0002 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Զանազանյան փողոց, 1-ին փակուղի:**

**4. Նոր Նորք վարչական շրջանի.**

1) Բագրևանդի փողոցից սկսվող, Ն. Ստեփանյան և Մոլդովական փողոցների հատման մաս հասնող ճանապարհահատվածն անվանակոչել հայ կոմպոզիտոր, ջութակահար, պրոֆեսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սերգեյ Աղաջանյանի անվամբ՝ «**Սերգեյ Աղաջանյան փողոց»,**

2) նախատեսվող Սերգեյ Աղաջանյան փողոցից սկսվող և հ.01-008-0506-0274 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Սերգեյ Աղաջանյան փողոց, 1-ին նրբանցք,**

3) նախատեսվող Սերգեյ Աղաջանյան փողոցից սկսվող և նախատեսվող Մոլդովական փողոցի 3-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Սերգեյ Աղաջանյան փողոց, 2-րդ նրբանցք,**

4) Բագրևանդի փողոցից սկսվող և նախատեսվող Բագրևանդի փողոցի 3-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Բագրևանդի փողոց, 1-ին նրբանցք,**

5) Բագրևանդի փողոցից սկսվող, նախատեսվող Բագրևանդի փողոցի 1-ին նրբանցքը հատող և հ.01-008-0506-0188 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Բագրևանդի փողոց, 2-րդ նրբանցք,**

6) Բագրևանդի փողոցից սկսվող և հ.01-008-0506-0709 կադաստրային ծածկագրով գույք հասնող, նախատեսվող Բագրևանդի փողոցի 4-րդ նրբանցքին զուգահեռ ճանապարհահատվածն անվանակոչել **Բագրևանդի փողոց, 3-րդ նրբանցք,**

7) Բագրևանդի փողոցից սկսվող, նախատեսվող Բագրևանդի փողոցի 2-րդ նրբանցքը հատող ճանապարհահատվածը, որը զուգահեռ է նախատեսվող Բագրևանդի փողոցի 2-րդ և 3-րդ նրբանցքներին, անվանակոչել **Բագրևանդի փողոց, 4-րդ նրբանցք,**

8) Մոլդովական փողոցից սկսվող և նախատեսվող Բագրևանդի փողոցի 3-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Մոլդովական փողոց, 3-րդ նրբանցք:**

**5. Նորք-Մարաշ վարչական շրջանի.**

1) Էդուարդ Իսաբեկյան փողոցի վերջից սկսվող և Նորքի 2-րդ փողոցի հ.01-009-0013-0030 կադաստրային ծածկագրով գույքի մոտ հասնող ճանապարհահատվածն անվանակոչել նկարչուհի, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Ռեգինա Ղազարյանի անվամբ՝ **«Ռեգինա Ղազարյան փողոց»,**

2) Նախատեսվող Ռեգինա Ղազարյան փողոցից սկսվող և հ.01-009-0013-0004 կադաստրային ծածկագրով գույքի մոտ հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ռեգինա Ղազարյան փողոց, 1-ին նրբանցք,**

3) Էդուարդ Իսաբեկյան փողոցի հ.17 հասցեից սկսվող և հ.01-009-0014-0014 կադաստրային ծածկագրով գույք հասնող, հ.01-009-1043-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածն անվանակոչել **Էդուարդ Իսաբեկյան փողոց, 1-ին փակուղի,**

4) Դավիթ Բեկի փողոցից սկսվող, Բուժաշխատողների փողոցը հատելով Էդուարդ Իսաբեկյան փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել սփյուռքահայ նկարիչ Մարկոս Գրիգորյանի անվամբ՝ **«Մարկոս Գրիգորյան փողոց»,**

5) Գ. Հովսեփյան և Դավիթ Բեկ փողոցների միջև ընկած հ.01-009-1056-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածն անվանակոչել թատրոնի և կինոյի նշանավոր դերասան, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Վլադիմիր Մսրյանի անվամբ՝ **«Վլադիմիր Մսրյան փողոց»,**

6) Ա. Արմենակյան փողոցից սկսվող և մինչև Էրեբունի վարչական շրջանի Մ. Խորենացու փողոցի 3-րդ փակուղի ձգվող ճանապարհահատվածն անվանակոչել **Սարալանջի փողոց:**

**6. Շենգավիթ վարչական շրջանի.**

1) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Կենտրոնական փողոցից սկսվող և Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 21-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 33-րդ փողոց,**

2) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 1-ին փողոցից սկսվող և Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 4-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 1-ին փողոց, 1-ին նրբանցք,**

3) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 4-րդ փողոցից սկսվող և մինչև հ.01-011-0624-0099 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 4-րդ փողոց, 1-ին փակուղի,**

4) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Կենտրոնական փողոցից սկսվող և Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 1-ին փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածք, Կենտրոնական փողոց, 1-ին նրբանցք,**

5) Նորագավիթի 13-րդ փողոցի հ.01-011-0495-0002 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող և հ.01-011-1387-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհ հասնող հատվածն անվանակոչել **Նորագավիթի 13-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

6) Նորագավիթի 14-րդ փողոցից սկսվող և հ.01-011-0314-0017 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց,**

7) Նախատեսվող Նորագավիթի 15-րդ փողոցից սկսվող և հ.01-011-0315-0011 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

8) Հ.01-011-0310-0028 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող, նախատեսվող Նորագավիթի 15-րդ փողոցը հատելով հ.01-011-0317-0012 կադաստրային ծածկագրով

գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց, 2-րդ նրբանցք,**

9) Հ.01-011-0312-0001 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող, նախատեսվող Նորագավիթի 15-րդ փողոցը հատելով հ.01-011-0318-0011 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց, 3-րդ նրբանցք,**

10) Հ.01-011-0313-0001 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող, նախատեսվող Նորագավիթի 15-րդ փողոցը հատելով հ.01-011-0019-0998 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց, 4-րդ նրբանցք:**

**7. Կենտրոն վարչական շրջանի.**

1) Սարալանջի փողոցի՝ Աբովյան պուրակից մինչև «Հաղթանակ» զբոսայգի հատվածն անվանափոխել **Ազատության պողոտա** (որպես Ազատության պողոտայի սկիզբ):

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**
**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ, ՆՐԲԱՆՑՔՆԵՐ ԵՎ ՓԱԿՈՒՂԻՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ կետի համաձայն՝ գույքերին հասցեներ տրամադրելու նպատակով Կադաստրի կոմիտե ուղարկվող համապատասխան հայտերը մերժվում են՝ պատճառաբանությամբ, որ ճանապարհահատվածները, որոնց կից գտնվում են գույքերն անհրաժեշտ է անվանակոչել և անվանակոչելուց հետո նոր անդրադառնալ հասցեավորման հարցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել իրականացնել որոշ անվանակոչություններ:

Ակադեմիկոս **Սերգեյ Համբարձումյանը** ծնվել է 1922 թվականի մարտի 17-ին, Ալեքսանդրապոլում (Գյումրի):

1938 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը՝ Երևանում, 1942 թվականին՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1946 թվականին նա հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 1952 թվականից տեխնիկական գիտությունների դոկտոր է: 1953 թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 34 տարեկան հասակում՝ 1956 թվականին, Սերգեյ Համբարձումյանն ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1964 թվականին՝ ակադեմիկոս: 1959-1970 թվականներին եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի, 1970–1977 թվականներին՝ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն: 1961 թվականից նախ ԽՍՀՄ, ապա՝ Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի և նախագահության անդամ: 1970-1992 թվականներին եղել է Հայաստանի Պետական մրցանակների կոմիտեի նախագահի տեղակալ:

1943-1946 թվականներին նա դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ 1948 թվականից՝ Երևանի պետհամալսարանում: Նրա գիտական ղեկավարությամբ ավելի քան 50 երիտասարդ գիտնականներ պաշտպանել են դոկտորական ու թեկնածուական թեզեր: 1977-1991 թվականներին Սերգեյ Համբարձումյանը եղել է Երևանի պետական համալսարանի ռեկտորը:

Պարգևատրվել է Լենինի (1981), Աշխատանքային կարմիր դրոշի (1976), Հոկտեմբերյան հեղափոխության (1986), Պատվո նշան (1971), Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ շքանշաններով, «Աշխատանքային արիության համար» (1955), «Խաղաղության մարտիկ», «Բարեկամություն» և այլ մեդալներով, 1986 թվականին արժանացել է Մոնպելյե քաղաքի (Ֆրանսիա), 1997 թվականին՝ Գյումրի քաղաքի, իսկ 2012 թվականին Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի կոչումներին:

Սերգեյ Համբարձումյանը մահացել է 2018 թվականի օգոստոսի 4-ին, Երևանում:

Պետական և դիվանագիտական գործիչ **Կամո Ուդումյանը** ծնվել է 1927 թվականի դեկտեմբերի 25-ին:

1949 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, 1951 թվականին՝ ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան:

1952-1957 թվականներին եղել է ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար, 1957-1959 թվականներին՝ ՀԽՍՀ ԳԱ-ին կից կոորդինացիոն խորհրդի գիտքարտուղար, 1959-1962 թվականներին՝ ՀԿԿ Տավուշի կուսշրջկոմի առաջին քարտուղար, 1965-1976 թվականներին՝ ՀԿԿ կենտկոմի անդամ, 1967-1975 թվականներին՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 6-8-րդ գումարումների պատգամավոր: 1962-1964 թվականներին եղել է Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄԻ պրոռեկտոր, 1964-1967 թվականներին՝ ՀՊՄԻ ռեկտոր: 1963-1964 թվականներին զբաղեցրել է ԽՍՀՄ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի գիտական մասով փոխտնօրենի պաշտոնը: 1967-1972 թվականներին եղել է ՀԽՍՀ մշակույթի նախարար, 1972-1975 թվականներին՝ արտաքին գործերի նախարար: 1975-1979 թվականներին եղել է ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան՝ Նեպալի Թագավորությունում, 1979-1984 թվականներին՝ արտակարգ և լիազոր դեսպան՝ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում: 1984 թվականին նշանակվել է Մշակույթի հիմնադրամի նախագահի տեղակալ (Մոսկվա): 1987 թվականից տարբեր պաշտոններ է զբաղեցրել խորհրդային արտգործնախարարությունում, ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի նախագահությունում, Մշակույթի խորհրդային հիմնադրամում:

Կամո Ուդումյանի դիվանագիտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Եվրոպայի հետ հարաբերությունների ուղղությունը: Նրա՝ Լյուքսեմբուրգում ԽՍՀՄ դեսպան եղած ժամանակաշրջանը համընկնում էր Խորհրդային Միության և Արևմտյան Եվրոպայի միջև բարդ աշխարհաքաղաքական հակասությունների, գաղափարական հակադրության և միջազգային անվտանգության լուրջ տարաձայնությունների ժամանակահատվածի հետ: Նման պայմաններում արևմտյան Եվրոպայի պետության հետ կայուն և կառուցողական միջպետական երկխոսության ապահովումը պահանջում էր բարձր մակարդակի դիվանագիտական պատրաստվածություն, քաղաքական ճկունություն և փոխադարձ շահերի շուրջ արդյունավետ համագործակցություն կառուցելու կարողություն: Նրա գործունեության միջազգային բարձր գնահատականի առավել նշանակալի վկայությունն է Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կողմից նրան «Մեծ խաչի» ասպետի կոչման շնորհումը: Կարևոր է ընդգծել, որ այդ գնահատականը տրվել է հենց այն եվրոպական պետության կողմից, որտեղ նա ներկայացնում էր Խորհրդային Միությունը: Այս հանգամանքը նրա դիվանագիտական վաստակին հաղորդում է առանձնահատուկ նշանակություն՝ որպես Եվրոպայի հետ հարաբերությունների կառուցողական զարգացման գործում հայազգի բարձրաստիճան խորհրդային դիվանագետի ներդրման միջազգային ճանաչում:

Կամո Ուդումյանը պատկանում է հայ այն սակավաթիվ պետական և դիվանագիտական գործիչների թվին, որոնք խորհրդային ժամանակաշրջանում հասել են միջազգային դիվանագիտական ծառայության բարձրագույն մակարդակների և իրենց գործունեության համար արժանացել են նաև այլ սեփական երկրի բարձր պարգևների՝ ԽՍՀՄ «Պատվո շքանշանի», «Հոկտեմբերյան հեղափոխության» և «Ժողովուրդների բարեկամության» շքանշանների: Նրա օրինակն արժեքավոր է հատկապես այն առումով, որ ցույց է տալիս՝ նույնիսկ քաղաքական և գաղափարական խոր հակասությունների պայմաններում դիվանագիտությունը կարող է ծառայել պետությունների միջև կապերի պահպանմանը, երկխոսության խորացմանը և կառուցողական հարաբերությունների ձևավորմանը: Երևանում Կամո Ուդումյանի անվամբ փողոցի անվանակոչությունը, հետևաբար, կարող է ունենալ ոչ միայն պատմական հիշատակի, այլև քաղաքական և քաղաքակրթական խորհրդանշական նշանակություն: Այն կարող է ընդգծել Հայաստանի մայրաքաղաքի կողմից եվրոպական ուղղության, միջազգային երկխոսության և կառուցողական դիվանագիտության արժեքների կարևորումը՝ միաժամանակ արժևորելով հայ դիվանագիտական դպրոցի այն ներկայացուցիչներից մեկի վաստակը, որի գործունեությունը բարձր գնահատականի է արժանացել եվրոպական պետության կողմից:

Կամո Ուդումյանը մահացել է 2011 թվականի նոյեմբերի 3-ին: Այս տարի լրանում է նրա մահվան 15 տարին, իսկ արդեն իսկ եկող տարին հոբելյանական է՝ լրանալու է նրա ծննդյան 100 տարին:

Կամո Ուդումյանի անվամբ փողոցի անվանակոչությունը կնպաստի ոչ միայն նրա հիշատակի հավերժացմանը, այլև Երևան քաղաքի հանրության շրջանում հայ դիվանագիտական ժառանգության, միջազգային երկխոսության ու Եվրոպայի հետ կառուցողական հարաբերությունների արժեքի ընդգծմանը:

Ֆուտբոլիստ, միջազգային կարգի սպորտի վարպետ **Հովհաննես Զանազանյանը** ծնվել է 1946 թվականի դեկտեմբերի 10-ին, Հունաստանում:

1971 թվականին ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը, 1977 թվականին՝ Երևանի պետական համալսարանը:

Ֆուտբոլ սկսել է պարապել 1959 թվականին՝ Երևանի «Սպարտակում»: 1965 թվականին տեղափոխվել է Ղափանի «Լեռնագործ», առաջնության երկրորդ խմբի «Բ» դասում և դարձել է թիմի լավագույն ռմբարկու: 1966 թվականի մրցաշրջանի վերջում տեղափոխվել է ԽՍՀՄ առաջնության բարձրագույն խմբում հանդես եկող Երևանի «Արարատ», (ավագ մարզիչ Ա.Ֆալյան): ԽՍՀՄ առաջնության բարձրագույն խմբում մասնակցել է 243 խաղի, խփել 56 գոլ, դարձել ԽՍՀՄ չեմպիոն, գավաթակիր, արծաթե մեդալակիր:

1976 թվականին խաղացել է Մոսկվայի «Սպարտակում»: Կարիերան ավարտել է ՖԻՄԱ և «Ղարաբաղ» թիմերում:

1971-1972 թվականներին խաղացել է ԽՍՀՄ հավաքականում: 1972 թվականի Մյունխենի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր է:

Մարզել է Բեյրութի ՀՄԸՄ-ն, Հայաստանի Երիտասարդական հավաքականը, «Սպարտակ» և «Բանանց» ակումբները:

2008 թվականին արժանացել է «Երևանի պատվավոր քաղաքացի», իսկ 2011 թվականին՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի կոչումներին: 2013 թվականին պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով:

Հովհաննես Զանազանյանը մահացել է 2015 թվականի հոկտեմբերի 4-ին, Երևանում:

Հայ կոմպոզիտոր, ջութակահար, պրոֆեսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ **Սերգեյ Աղաջանյանը** ծնվել է 1929 թվականի սեպտեմբերի 1-ին, Պեխլևիում:

1937 թվականին ընտանիքը տեղափոխվել է Թեհրան, որտեղ էլ Սերգեյ Աղաջանյանը տեղի «Քյուշեշ-Դավթյան» հայկական դպրոցում ստացել է նախնական կրթություն: Հայտնի երաժիշտ Աշոտ Պատմագրյանի առաջարկով 1949 թվականին Աղաջանյանն ընդունվել և ավարտել է Թեհրանի պետական կոնսերվատորիան՝ Սերգեյ Խուցիևի ջութակի դասարանը: 1950 թվականին հանդես է եկել մենահամերգով և առաջինը Թեհրանում կատարել է Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը: Հետագայում Վենյավսկու գործերով հանդես է եկել Թեհրանի սիմֆոնիկ նվագախմբում՝ որպես մենակատար:

1953 թվականին Աղաջանյանը տեղափոխվել է իր հայրենիք՝ Հայաստան: Երևանում նա ընդունվել և ավարտել է Կոմիտասի անվան կոնսերվատորիան՝ նախ պրոֆեսոր Ա. Շամշյանի ջութակի դասարանը (1952թ.), այնուհետև՝ պրոֆեսոր Էդվարդ Միրզոյանի կոմպոզիցիայի դասարանը (1975թ.):

1975 թվականին դարձել է Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ:

1964 թվականին Աղաջանյանը հրավիրվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, որպես ինստիտուտի կամերային նվագախմբի ղեկավար: Այդ նվագախումբը եղել է իր տեսակի մեջ առաջինը և միակը: 30 տարվա ընթացքում նվագախումբն Աղաջանյանի գլխավորությամբ արժանացել է 5 ոսկե մեդալի և բազմաթիվ պատվավոր մրցանակների:

1983 թվականին ստացել է դոցենտի, 1987 թվականին՝ պրոֆեսորի կոչում: 1985 թվականին՝ Հայաստանի վաստակավոր գործչի կոչումը: 1999 թվականին Սանկտ-Պետերբուրգում Աղաջանյանի՝ թավջութակի համար գրված «Մենախոսություն» սոնատ-ֆանտազիան արժանացել է Պրոկոֆևի անվան 3-րդ միջազգային մրցույթի 1-ին մրցանակի:

Աղաջանյանի ստեղծագործությունները բազմաժանր են. վոկալ գործեր, գործեր կամերային նվագախմբի համար, կամերային նվագախմբի պոլիմոնոդիաներ, բազմաթիվ խմբերգային գործեր, սոնատներ ջութակի, թավջութակի, դաշնամուրի համար, խմբերգային կանտատա սիմֆոնիկ նվագախմբի համար և այլն:

Սերգեյ Աղաջանյանը մահացել է 2005 թվականի հունվարի 9-ին:

Նկարչուհի, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ **Ռեգինա Ղազարյանը** ծնվել է 1915 թվականի ապրիլի 17-ին:

1951 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստի ուսումնարանը:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ զորակոչվել է բանակ և ծառայել աերոփակոցային 5-րդ գնդում, Կասպից ծովի ափին:

Ռեգինա Ղազարյանը կարողացել է փրկել 1935-1937 թվականներին Եղիշե Չարենցի ստեղծած աշխատանքները, որոնց թվում՝ «Ռեքվիեմ Կոմիտասին», «Անանուն», «Աշնանային երգեր», «Նավզիկե» և շատ այլ գործեր:

Ստեղծագործել է դիմանկարի («Չարենց», 1966, «Կոմիտաս», 1968, «Աննա Ախմատովա», 1981), թեմատիկ պատկերի («Այս հմուտ, հանճարեղ լոռեցին», 1969, «Խեցեգործներ», 1978, «Սպիտակ կռունկներ», 1980, «Խաղաղ տիեզերք», 1983) և բնանկարի («Աշուն», 1962, «Աղավնաձոր», 1965) բնագավառներում:

Ղազարյանի արվեստում մեծ տեղ են գրավում չարենցյան թեման և նրա պոեզիայից ներշնչված գործերը («Ամբոխները խելագարված», 1965, «Ասպետական», 1975, «Չարենցի վերջին ճանապարհը՝ հավերժություն», 1998, Եղիշե Չարենցի տուն-թանգարան, Երևան):

Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում (1967, 1987, 1988), Էջմիածնում և Գյումրիում (1967):

1985 թվականին արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր նկարչի, իսկ 1995 թվականին՝ «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչումներին:

Ռեգինա Ղազարյանը մահացել է 1999 թվականի նոյեմբերի 6-ին, Երևանում:

Սփյուռքահայ նկարիչ **Մարկոս Գրիգորյանը** ծնվել է 1925 թվականի դեկտեմբերի 5-ին, Կրոպոտկինում:

1930 թվականին ընտանիքը Կրոպոտկինից տեղափոխվել է Իրան, սկզբնական շրջանում բնակվել Թավրիզում, այնուհետև՝ Թեհրանում: Նախնական կրթությունն ստացել է Իրանում: 1950 թվականին սովորել է Հռոմի Գեղեցիկ արվեստների ակադեմիայում: 1954 թվականին ակադեմիան ավարտելուց հետո վերադարձել է Իրան, բացել գեղագիտական պատկերասրահ: 1958 թվականին Իրանի մշակույթի նախարարության հովանու ներքո կազմակերպել է Թեհրանում առաջին բիենալեն: Դասավանդել է գեղարվեստի ակադեմիայում:

1993 թվականին Մարկոս Գրիգորյանը Հայաստանին է նվիրել իր հավաքածուի զգալի մասը, որի հիման վրա Երևանում բացվել է Միջին Արևելքի արվեստի թանգարան:

2016 թվականի հունիսի 1-ին Գաֆեսճյան արվեստի կենտրոնում բացվել է «Մարկոս Գրիգորյան. Խաչմերուկներ» խորագրով ցուցահանդեսը:

1994 թվականին Մարկոս Գրիգորյանին շնորհվել է «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչումը:

Մարկոս Գրիգորյանը մահացել է 2007 թվականի օգոստոսի 27-ին, Երևանում:

Թատրոնի և կինոյի հայ նշանավոր դերասան, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ **Վլադիմիր Մսրյանը** ծնվել է 1938 թվականի մարտի 12-ին, Վլադիկավկազում:

Տարիներ անց նրանք տեղափոխվել են Հայաստան ու ապրել Ալավերդիում:

1958-1962 թվականներին Վլադիմիր Մսրյանը սովորել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում: 1963-1964 թվականներին աշխատել է Պատանի

հանդիսատեսի թատրոնում, 1964-1966 թվականներին՝ Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում, 1966 թվականից՝ Երևանի դրամատիկական թատրոնում: Նրա հիմնական նշանաբանն էր. «Ամեն անգամ խաղա այնպես, իբրև վերջին անգամն ես խաղում»:

Խաղացել է. Համլետ՝ Շեքսպիրի «Համլետ», Ալեքսեյ՝ Դոստոևսկու «Խաղամոլը», Հերոստրատ՝ Գորինի «Մոռանալ Հերոստրատին», Միհրդատ Պոնտացի՝ Զեյթունցյանի «Աստվածների կանչը», Վոյնիցկի՝ Չեխովի «Քեռի Վանյա»:

1972 թվականից նկարահանվել է կինոյում՝ «Վերադարձ» («Հայֆիլմ»), «Պագանինի» («Բուլղարֆիլմ» և «Մոսֆիլմ»), «Խնձորի այգին», «Շեկ ինքնաթիռ», 1975, «Ամրոց», 1978, «Պտտահողմ» («Տաջիկֆիլմ», 1988), «Լռության սիմֆոնիա» (Հայաստանի ազգային կինոկենտրոն, 2001), «Ձայն բարբառոյ...», «Նիկոլո Պագանինի», 1982, «Հատակում», 1987:

1987 թվականին արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչմանը, Հայաստանի պետական մրցանակի, 2008 թվականին՝ «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչմանը, պարգևատրվել է՝ Մովսես Խորենացու մեդալով:

Վլադիմիր Մսրյանը մահացել է 2010 թվականի օգոստոսի 24-ին, Երևանում:

Հաշվի առնելով վերը նշված գործիչների նշանակալի ավանդը հայ մշակույթի, գիտության, արվեստի, երաժշտության և սպորտի զարգացման գործում, ինչպես նաև կարևոր դերակատարությունը Երևան քաղաքի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքում և նրանց հիշատակը հավերժացնելու նպատակով, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**